ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ «Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՄԵԹՈԴՈՎ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ ՎԱՐԴԵՆԻՍ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԵՑԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԳԱՅԱՆԵ ՄՈՄՋՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ «ՄԵԾ ՄԱՍՐԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1.ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 6

2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 19

2.1 Խմբի նկարագիրը 19

2.2 Փորձարարական դաս 1 20

2.3 Փորձարարական դաս 2 22

3.Վերլուծություն 24

Եզրակացություն 25

Օգտագործված գրականության ցանկ 26

Հավելված 27

Դասապլան 1 27

Դասապլան 2 33

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պետության ու հասարակության կայուն զարգացումն ու առաջընթացն ապահովելու համար կարևոր է մեծ ուշադրություն դարձնելն այնպիսի ռեսուրսներին, որոնք նպաստում են ներքին և արտաքին մարտահրավերներին դիմակայելուն: Այդպիսի ռեսուրսների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում գիտելիքը, որի զարգացման հիմնական միջոցներից է կրթությունը: Կրթությունն ընդլայնում է մարդու հնարավորությունները գիտելիքների և մասնագիտական կարողությունների ձեռք բերման գործում: Կրթության նպատակն ու բովանդակությունը ինքնանպատակ չեն, այլ կախված են տվյալ հասարակության նյութական և հոգևոր պահանջմունքներից:

Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն:[1]

Ընդհանուր առմամբ՝ կրթության բնագավառում ՀՀ որդեգրած քաղաքականությունը նպատակաուղղված է կրթության միջոցով պետականության հզորացմանը, հոգևոր արժեքների, մշակույթի, ավանդույթների պահպանմանը, գիտության զարգացմանը, տնտեսական, սոցիալական, կրթական հիմնահարցերի լուծմանը:

Կրթական համակարգը, տարբեր գործոններով պայմանավորված, ենթարկվում է բազմաթիվ փոփոխությունների. այդպիսի փոփոխություններից մեկն էլ ուսուցչակենտրոն ուսուցումից աշակերտակենտրոն ուսուցման անցումն էր, ինչը նպաստեց աշակերտի ինքնուրույնության ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև ավելի հետաքրքիր ու ակտիվ դարձրեց դասապրոցեսը: Այս դեպքում կրթությունը դարձավ ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեություն,ինչը նպաստեց երեխաների հետաքրքրությունների ձևավորմանը, և նրանց մեջ արթնացրեց նոր գիտելիքներ ձեռք բերելու, դրանք ներկայացնելու ցանկություն:

Թեմայի արդիականությունը:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այսօր՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարում, շատ մեծ է դպրոցականների ինքնուրույն և ստեղծագործ լինելու սոցիալական պահանջը, ինչպես նաև անհրաժեշտությունը՝ օգտվելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներից, որոնք կօժանդակեն դպրոցականների ինքնուրույնության զարգացմանը և կհարստացնեն դպրոցում ինքնուրույն գործունեության փորձը:

Հետազոտական աշխատանքի նպատակը:

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299

Նպատակն է կրտսեր դպրոցականի ուսումնական, իմացական, ստեղծագործական ներուժի խթանումը՝ ունակությունների կատարելագործման և զարգացման, ինքնուրույնության, ինչպես նաև տարբեր հմտությունների ձևավորման միջոցով:

Հետազոտական աշխատանքի խնդիրները:

Տվյալները հավաքելու, մշակելու, համակարգելու, կարողությունների ձևավորում

Տեղեկատվությունը համադրելու, ընդհանրացնելու կարողություն

Ճանաչողական կարողություններ

Տեղեկատվական տարբեր աղբյուրներից ինքնուրույն օգտվելու կարողություն

Թիմում և առանձին աշխատելու կարողությունների զարգացում:

Հետազոտական աշխատանքի մեթոդաբանական հիմքը:

Աշակերտը պետք է գիտելիքներ ստանա ոչ թե պատրաստի ձևով, այլ դրանք ձեռք բերի ինքնուրույնաբար՝ որոնողական, հետազոտական, համագործակցային աշխատանքի արդյունքում: Ինքնուրույնության զարգացմանն են նպաստում համագործակցային ուսուցումը, ճանաչողական–որոնողական աշխատանքները, խաղային տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպումը, ինքնագնահատման կարողությունների զարգացումը:[2]

Հետազոտական աշխատանքի գործնական և տեսական նշանակությունը:

Հետազոտական աշխատանքի տեսական նշանակությունը պայմանավորված է հիմնախնդրի վերաբերյալ աղբյուրների տեսական վերլուծությամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը. մեր հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ուսումնական գործընթացում սովորողի ինքնուրույնության զարգացման և համագործակցային մեթոդի նպատակային կիրառման համար:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածական մասից, գրական ակնարկից, փորձարարական հետազոտությունից, եզրակացությունից,հավելվածից ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

---

[2] Նախաբավիդ 2.2017

1.ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ինքնուրույնությունը մարդու կարևորագույն հատկանիշներից է, ինչի ձևավորումը սկսվում է բավականին վաղ տարիքում: Երեխայի ինքնուրույնությունն արտահայտվում է նրա կյանքի բազմաթիվ ոլորտներում. ինքնասպասարկում, խաղեր, մշակութահիգիենիկ, հանրօգուտ գործունեություն, շրջապատի հետ շփումներ և այլն:

Ինքնուրույնության ձևավորման մեջ մեծ դեր է հատկացվում երեխայի տարրական աշխատանքային գործողություններին: Դեռ ավելին, աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը, աշխատանքային հանձնարարություններ կատարելու պահանջմունքը և այլն դրվում և ձևավորվում են մանկական ինքնուրույնության շրջանակներում:[3]

Ինքնուրույնությունը անձի հավաքական հատկանիշ է, որն ունի մի շարք բաղկացուցիչներ և ենթադրում է՝

նախաձեռնողականություն,

ակտիվություն,

ինքնավստահություն,

նպատակասլացություն:

Ինչու՞ է ինքնուրույնությունն այսքան կարևորվում. պատճառն այն է, որ որևէ համակարգ չի կարող համարվել զարգացած կամ զարգացող, եթե այն ինքնուրույն չէ: Ցանկացած կախյալ վիճակ համարվում է

[3] Նախաշավիղ№7. 2011

ավելի ցածր մակարդակում գտնվող համակարգ, քան ինքնուրույնությունը: Կարևոր է չխանգարել տվյալ որակի ձևավորմանը, քանի որ ինքնուրույնությունն անձին ներհատուկ ու բնազդային հատկություն է. մարդն իր ծնված օրվանից ի վեր ձգտում է ինքնուրույնության:

Օրինակ՝ տարբեր տարիքային փուլերում երեխան փորձում է իրեն հասանելի թվացող գործողությունները կատարել ինքնուրույն:

Այսինքն՝ սա մի բնազդային հատկություն է, որ երեխան ունի, և եթե մենք չենք խանգարում այս հատկության զարգացմանը, ապա այն ինքնաբուխ զարգանում է, և արդյունքում ունենում ենք կայացած անձ և անհատ, ով հստակ գիտակցում է՝ ինչ է ցանկանում, ինչպիսի հնարավորություններ ունի իր ցանկություններին հասնելու համար և ինչ է իրենից պահանջվում լրացուցիչ:

Երեխայի ինքնուրույնության ձևավորմանը նպաստում է նաև նրան ազատելը սխալվելու վախից. միայն սխալվելու վախ չունեցող մարդիկ կարող են ինքնուրույն լինել: Ինքնուրույն մարդիկ փորձում են հավատարիմ լինել սեփական ցանկություններին և ինքնուրույն մարդիկ կարողանում են ավելի իրատեսորեն գնահատել իրենց հնարավորություններն ու կարողությունները: Մնացած բոլորը հավատում են արտաքին աշխարհից եկած գնահատականներին և իրատեսորեն չեն գնահատում սեփական կարողությունները:

Ինքնուրույն մարդիկ պատասխանատու են վերաբերվում սեփական քայլերին: Եվ ի վերջո, սա այն որակն է, որի կարիքը մենք ունենք անկախ քաղաքացու ձևավորման գործընթացում:[4]

Ուսումնական գործընթացում սովորողների ինքնուրույնության զարգացմանը նպաստում են տարաբնույթ ինքնուրույն աշխատանքները: Սովորողի ինքնուրույնությունն ապահովում է ավանդական դասից հստակ տարբերվող՝ կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի անցկացումը, ինչն այսօր անչափ խրախուսվում է:

Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունն ուղղված է սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտություններ, դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի ուսուցմանը:

Իսկ ինչո՞վ են տարբերվում ավանդական և կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասերը.

- ավանդական դասի ընթացքում սովորողները պասիվ են, հիմնականում լսում են, իսկ կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի ժամանակ հնարավորություն ունեն հարցեր տալու, կարծիքներ հայտնելու:

[4] http://boon.am/autonomy/

- ավանդական դասի ժամանակ գործում է ուսուցիչ–աշակերտ կապը, իսկ կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին՝ նաև աշակերտ–աշակերտ կապը և այլն:[5]

Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունը կլինի հաջողված, եթե սովորողներն օժտված լինեն ինքնուրույն աշխատելու, որոշումներ կայացնելու հմտությամբ:

Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը:

Վերոնշյալից կարելի է ենթադրել, որ ինքնուրույնության ձևավորման արդյունավետությունը պայմանավորված է երկու կողմով՝ աշակերտ և ուսուցիչ:

Երեխայի ինքնուրույնությունը զարգացնող ուսուցիչը՝

Ինքնուրույն որոշումներ է կայացնում և կարևոր հարցերի որոշումների ժամանակ ավելի շատ լսում է իր ներքին ձայնը, այլ ոչ ընկերների խորհուրդները:

Հասարակական կարծիքը չանտեսելով հանդերձ ունի սեփական կարծիք ցանկացած երևույթի վերաբերյալ:

Իր արարքների գնահատողն ինքն է,այլ ոչ իրեն շրջապատող մարդիկ:

Սիրում է ինքնուրույն մարդկանց, չի սիրում ուրիշների փոխարեն որոշումներ կայացնել:

Դաստիարակում է ինքնուրույն երեխաներ, ուրախանում է, երբ իր երեխաներն անկախանում են:

Դասերի ժամանակ նախընտրում է հարցեր ուղղել սովորողներին, քան բացատրություններ տալ:

Սիրում է բազմազանություն, միօրինակությունը նրան ձանձրացնում է:

Դասի ընթացքում առավելապես օգտագործում է բաց հարցեր, չի սիրում «այո» և «ոչ» պատասխաններ պահանջող հարցեր:[6]

Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:

Սովորողների ինքնուրույնության զարգացման նպատակով անհրաժեշտ է.

---

[5] Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան,2020

[6] Նախաբավիդ №7, 2011

առաջին օրերից սկսած երեխաներին մասնակից դարձնել ընդհանուր շաբաթվա գործերի պլանավորմանը, ինչպես նաև մշակել իրենց գործերը պլանավորելու հմտություններ,

երեխաների հետ քննարկել և ամփոփել շաբաթական պլանների իրագործումն ու արդյունքները,

մարզել երեխաների՝ միմյանց պատասխանները քննարկելու և գնահատականները վերլուծելու կարողությունը,

քննարկել արարքները, վերլուծել և գնահատել,

երեխաների սխալների հանդեպ հանդուրժող լինել՝ չվնասելու համար նրանց մեջ նախաձեռնողականությունը, այսինքն՝ ինքնուրույնությունը,

անընդհատ հետաքրքրվել երեխաների տեսակետներով և կարծիքներով,

վստահ լինել, որ երեխաներից կարելի է շատ բան սովորել և ստանալ,

առավել շատ հարցեր տալ երեխաներին, իսկ բացատրությունների դիմել միայն այն դեպքում , երբ այլ կերպ հնարավոր չէ նյութի ընկալումը,

երբ երեխան օգնություն է խնդրում, նախ վստահություն հայտնել, որ նա դա կարող է անել ինքնուրույն: Ապա ուղղակի ուղղորդող խորհուրդներ տալ:Եթե այս կերպ էլ երեխան չկարողանա աշխատել, ապա աստիճանաբար մեծացնել օգնության չափը:[7]

Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար:

Ինքնուրույն են կոչվում այն աշխատանքները, որոնք աշակերտները կատարում են ուսուցչի հանձնարարությամբ և կամ՝ սեփական նախաձեռնությամբ: Որպեսզի սովորողները հմտանան ինքնուրույն մտավոր աշխատանք կատարելու մեջ, անհրաժեշտ է, որ սկզբնական փուլում դրանք իրագործվեն ուսուցչի ղեկավարության պայմաններում, իսկ հաջորդ փուլերում՝ ինքնուրույն նախաձեռնությամբ:

Սովորողների ինքնուրույն աշխատանքների կատարումները պետք է ունենան փաստերը, օրենքները, օրինաչափությունները ինքնուրույնաբար ճանաչելու ստեղծագործական գործունեությունը

[7] Նախաշավիղ №7, 2011

զարգացնելու ուղղվածություն:

Ցանկացած ինքնուրույն աշխատանք կատարելուց առաջ սովորողները պետք է ունենան օպերատիվ պլաններ, որտեղ արտացոլված լինեն, թե ինչը երբ կատարել, երբ ավարտել ու ամփոփել, արդյունքները ներկայացնել քննարկման:[8]

Նկատելի է, որ ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում: Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:

Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա: Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները:

Կան ինքնուրույն աշխատանքի տարբեր տեսակներ: Օրինակ՝

- Նոր գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք. այս դեպքում սովորողներն ուսուցչի հանձնարարությամբ կամ սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրում են ուսումնական թեմաներին առնչվող համապատասխան լրացուցիչ գրականություն, մշակում են այն բոլոր նյութերը, որոնք չկան դասագրքերում: Իմաստավորում, ընդհանրացնում են ձեռք բերած նոր գիտելիքները և կիրառում են գործնականում:
- Նոր կարողություններ և հմտություններ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք. նման աշխատանքներն իրականացվում են ուսումնական կաբինետներում, լաբորատորիաներում, դպրոցի արհեստանոցներում, մարզադաշտում: Սովորողներն ինքնուրույն ծանոթանում են դիտազննական պարագաներին, ուսուցման տեխնիկական միջոցներին, ճանաչում գործիքները, սարքերը, մեքենաները: Իրենց մեջ մշակում են դրանք ճիշտ օգտագործելու կարողություններ և հմտություններ:[9]

Ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում ունի շատ մեծ

[8] Ցու.Ամիրջանյան,Ա.Սահակյան Մանկավարժություն/ուս.ձեռնարկ/2005
[9] Ցու.Ամիրջանյան,Ա.Սահակյան. Մանկավարժություն/ուս.ձեռնարկ/2005

նշանակություն: Տարրական դասարաններում ինքնուրույն գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն ունի որոշակի կառուցվածք. այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. կազմակերպչական. սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է, բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:
2. նախապատրաստական. այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:
3. կողմնորոշիչ. այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Սովորողը ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում, ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը:

   Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն:
4. հիմնական փուլ. այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:
5. ամփոփիչ փուլ. այս փուլում կատարվում է անդրադարձ: Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:
6. ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:[10]

[10] Կ. Թորոսյան, Ա. Բալայան, Կ. Զիբուխչյան, Մայրենիի դասերի պլանավորումը,

«Զանգակ» հրատարակչություն, Երևան,2016թ.

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում:Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի

հետկատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն:

Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման ֆայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:[11]

Ուսումնական նպատակ	Ճանաչողական գործունեութ. բնույթ	Կազմակերպման ձև	Դիդակտիկ նյութերի կիրառում	Կատարմա տեղ

[11] Նախաշավիղ№7,2011

ա. Հիմնարար գիտելիքների կրկնության և նոր նյութի ընկալմանը պատրաստող, բ. Նոր նյութի ուսումնասիրություն. նպաստող գ. Գիտելիքները համակարգող դ. Որոշակի կարողություններ զարգացնող ե. Ստուգող, վերահսկող	ա.Ըստ տրված նմուշի./գրել տառեր,թվեր, սոսնձել տուփ/: բ. Կառուցողական գ. Ստեղծագործական հետազոտական	ա. Ընդհանուր ճակատային /կատարում են միևնույն աշխատանքը/ բ. Խմբային /տարբեր խմբեր, տարբեր հարցեր/ գ. Անհատական /սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա/:	ա.Աշխատանք դասագրքով, տեղեկատու գրականության շուրջ,բառարաններ, հանրագիտարաններ բ.Շարադրություններ ըստ հենակետային բառերի,նկարների շուրջ գ.Դիտումներ, գործնական աշխատանքներ դ.Աշխատանք բաշխիչ նյութերի կիրառմամբ ե.Գրաֆիկական աշխատանքներ զ.Ինքնուրույն աշխատանքներ, որոնք կախված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ:	ա. Դասար բ.Տանը

Գծապատկեր 1 – Ինքնուրույն աշխատանքի տեսակները

Վերևում բերված աղյուսակում ներկայացված են բոլոր այն ինքնուրույն աշխատանքների տեսակները, որոնք հնարավոր է կիրառել տարրական դասարաններում:[12]

Ինքնուրույնության զարգացման համար ուսուցման լավագույն կազմակերպման ձևը խմբային, համագործակցային աշխատանքն է: Երբ երեխան իր աշխատանքը համեմատում է մյուսների աշխատանքի հետ և գնահատում իրեն, այս տեսակ գնահատումն առավել մեծ նշանակություն է ունենում իր անձի ձևավորման վրա:

[12] Կ. Թորոսյան, Կ. Զիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունը: [13]



Գծապատկեր 2. Համագործակցային ուսուցման տարրերը

Համագործակցային ուսուցման մեթոդներն են՝

- Աշակերտների թիմային առաջադիմություն
- Խճանկար
- Շրջագայություն պատկերասրահում

[13] Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ, Պուրուկուրու Վ.Համագործակցային ուսուցում.Ձեռնարկ,Երևան:«Անտարես»: 2006

- Երեք բանալի և մեկ կողպեք
- Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Հասարակությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը:

Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը:

Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը, այլև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը: Ուստի մեր խնդիրն է դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում:

2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1 Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքն անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոցում՝ 2-րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորող մի քանի աշակերտներ դժվարությամբ են ինքնադրսևորվում խմբային աշխատանքների ժամանակ և չեն կարողանում աշխատել ինքնուրույն:

Հաշվի առնելով այն փաստը, որ ինքնուրույնությունը ձևավորում է կայացած անձ և անհատ, ով հստակ գիտակցում է՝ ինչ է ցանկանում, ինչպիսի հնարավորություններ ունի իր ցանկություններին հասնելու համար և ինչ է իրենից պահանջվում, կարևոր համարեցի անդրադառնալ այս թեմային:

Այս դասարանում սովորում է երեսուն աշակերտ՝ 13 տղա, 17 աղջիկ, որոնք ունեն բարձր առաջադիմություն:

Մայրենին 2-րդ դասարանում անցնում են շաբաթական 8 ժամ և դասացուցակում տեղադրված է առաջին և երկրորդ ժամերին:

Համագործակցային ուսումնառության մեթոդի օգնությամբ ցանկացել եմ վեր հանել աշակերտների ունեցած գիտելիքները և սովորեցնել այդ գիտելիքները կիրառել գործնականում՝ դարձնելով կարողություններ և հմտություններ:

Այդ նպատակով կատարված աշխատանքները աշակերտներին մղում է համարձակ ձևով ինքնարտահայտվել, սիրել գիրքը, լինել ուշադիր ունկնդիր, հարցեր առաջադրել, շարադրել սեփական մտքերը, դառնալ ավելի ինքնուրույն և անկախ:

Մի քանի փորձնական դաս անցկացնելով՝ ես մեծ ակնկալիքներ ունեմ իմ աշակերտներից և հավատում եմ, որ նրանցից յուրաքանչյուրը կարող է հասնել հաջողության:

2.2 Փորձարարական դաս 1

Դասը սկսեցի ուղերձով:

Նոր թեման հաղորդեցի: Թեմայի ուսուցման ժամանակ օգտագործեցի ԽԻԿ համակարգը:

Խթանում- Ծրարից հանեցի հանելուկը, կարդացի, իսկ երեխաները գուշակեցին հանելուկը, ապա բացեցի արկղիկը և հանեցի Գեղարդ եկեղեցու մանրակերտը: Այս փուլում օգտագործեցի «Կենտրոնացնող հարցեր» մեթոդը:

Տվեցի այն հարցերը, որոնց պատասխանները թաքնված են նոր ներկայացվելիք նյութի մեջ:

Իմաստի ընկալում- Այս փուլում օգտագործեցի «Ուղղորված ընթերցանություն» մեթոդը: Աշակերտները ընթերցեցին հատվածաբար՝ ընթերցած յուրաքանչյուր հատված մեկնաբանելով: Պատասխանեցին դադարների ավարտին առաջադրված հարցերին, որով ստուգեցի աշակերտների ուշադրությունը և կարդացածի ընկալման աստիճանը: Յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո կատարեցինք բառային աշխատանք:

Աշակերտները բառատետրում բնագրից դուրս գրեցին գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերը: Անծանոթ բառերի իմաստների բացատրությունը ինքնուրույն գտան դասագրքի վերջում զետեղված փոքրիկ բառարանից:

Լեզվատրամաբանական առաջադրանքները կատարեցին համագործակցային խմբերով:

Առաջին խմբի աշակերտները կատարեցին առաջադրանք 1-ինը, որը խառնագիր էր. բառերի տառերը խառնվել էին: Աշակերտները վերականգնեցին բառերը և այդ բառերով նախադասություններ կազմեցին:

Երկրորդ խմբի աշակերտները կատարեցին առաջադրանք 2-րդը՝ տրված բառերը համապատասխանեցրին նկարներին և կռահեցին՝ ինչը չկա նկարում, այդ բառով կազմեցին նախադասություն:

Երրորդ խմբի աշակերտները կատարեցին առաջադրանք 3-րդը՝ տրված բառերը օգտագործելով՝ կազմեցին մեկ նախադասություն:

Կշռադատում- Կիրառեցի «Քառաբաժան աղյուսակի» մեթոդը. յուրաքանչյուր խումբ պատասխանեց հետևյալ հարցերին՝

- ? Ի՞նչ տեսա
- ? Ի՞նչ լսեցի
- ? Ի՞նչ զգացի
- ? Ի՞նչ սովորեցի և իմացա:

Խմբերն աշխատեցին շատ ոգևորված և ներկայացրին աշխատանքներն ու համեմատեցին: Վերջում կարդացի հետևյալ միտքը՝ «Այն ժողովուրդը, որ չգիտի իր պատմությունը, ապագա չունի», և ամփոփեցի դասանյութի ամբողջ միտքը:

2.3 Փորձարարական դաս 2

Նոր թեման հաղորդեցի: Թեմայի ուսուցման ժամանակ օգտագործեցի ԽԻԿ համակարգը:

Դասի խթանման փուլում անցկացրի նախապատրաստական զրույց: Ներկայացրի դասանյութի նախաբանը.

–Հայրենիք, լեզու, ազատ ապրելու և արարելու հնարավորություն ունենալու համար մենք պարտավոր ենք մարդկանց, ովքեր ոչինչ չեն խնայել դրա համար: Ոմանք պատերազմել են զրչով, ոմանք՝ զենքով:

Այսօր ուսումնասիրելու ենք մեր ժողովրդի պատմության հերոսական էջերը և ստեղծելու ենք մեր հաղթանակների մասին պատմող գիրք՝ «Հաղթամատյան» :

Յուրաքանչյուր խումբ ձևավորելու է մատյանի մեկ էջ, բանավոր ներկայացնելու է այն, վերջում, էջերն իրար միացնելով, ստանալու ենք մեր «Հաղթամատյան» գիրքը:

Աշակերտներին բաժանեցի 6 խմբի, յուրաքանչյուր խմբի տվեցի Ա1 չափսի մեկ պաստառ: Սեղանին դրեցի հանրագիտարաններ, գրքեր, նկարներ, բառարան, հայրենիքի, նրա հերոսների մասին երգերի բառեր, ինչպես նաև ներկեր, մատիտներ, սոսինձ, մկրատ:

Յուրաքանչյուր խումբ դասանյութի համապատասխան հատվածը ընթերցեց, քննարկեց, յուրացրեց բառերը և բովանդակությունը:

Ձևավորված խմբերին տրամադրեցի նաև այլ նյութեր. յուրաքանչյուր խումբ ուսումնասիրեց տրամադրված նյութերը, դուրս բերեց անհրաժեշտ տեղեկատվությունը, մշակեց:

Ընտրելով և մշակելով անհրաժեշտ տեղեկատվությունն ու նյութերը ՝ յուրաքանչյուր խումբ ձևավորեց իր պաստառը: Պաստառը ձևավորելուց հետո յուրաքանչյուր խումբ նախապատրաստվեց այն բանավոր ներկայացնելուն՝ կրկին անդրադառնալով դասագրքին, թերթելով ուսումնասիրած նյութերը:

Նախապես մշակված չափանիշներից մեկը պետք է լինի խմբի յուրաքանչյուր անդամի մասնակցությունը բոլոր աշխատանքներում՝ նյութերի մշակում, պաստառի ձևավորում, ներկայացում:

Խմբերը հերթով ներկայացրին իրենց աշխատանքները՝ պատասխանելով առաջացած հարցերին:

Աշխատանքները ներկայացնելուց հետո ձևավորված բոլոր պաստառներն ըստ հաջորդականության միավորեցինք՝ ստանալով «Հաղթամատյանը»:

Կշռադատում

Անդրադարձ և ամփոփում: Աշակերտներին դիմեցի ուղերձով.

–Սիրելի՛ երեխաներ, ինչպես տեսանք, ամեն ժամանակաշրջան իր հերոսներն է ծնում, որ ամուր ու կանգուն մնա մեր հայրենիքը:

Դուք էլ դարձեք մեր ժամանակի հերոսները և յուրաքանչյուրդ յուրովի նպաստեք Հայաստանի

շեհացմանը:

Կոռադատման փուլի ավարտին ամեն խմբի տվեցի մեկ Շ տառ՝ վրան գրված մեկ հերոսի, նշանավոր հայի անուն:

Խմբերը, շրջանային շարադրանքի մեթոդով, 1-2 նախադասությամբ գրեցին իրենց սրտի խոսքը հայրենիքի նվիրյալներին, բարձրաձայն ընթերցեցին գրված խոսքերը և տառերը տեղադրեցին «Հաղթամատյանում»:

3.Վերլուծություն

Համագործակցային մեթոդոդով սովորողների ինքնուրույնության զարգացման համար անցկացրի երկու փորձարարական դաս, որոնց ժամանակ դասին մասնակցեց ամբողջ դասարանը:

Համագործակցային դասեր անցկացնելով, համադրելով բանավոր և գրավոր առաջադրանքները՝ նկատեցի մեծ ոգևորություն և առաջընթաց սովորողների շրջանում:

Դասերի արդյունքները վերլուծելով՝ հասկացա, որ երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբանր՝ դասից դաս: Համոզվեցի, որ սովորողների ինքնուրույն գործունեության կարողունակությունները զարգանում են ոչ միայն անհատական աշխատանքների ընթացքում, այլ խմբային աշխատանքների ժամանակ:

Համագործակցային ուսումնառության մեթոդը նպաստեց ոչ միայն ուսման արդյունավետության

բարձրացմանը, այլև նպաստեց ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Ճիշտ է, կային թերըմբռնումներ, որոնք անուշադրության հետևանք էին, սակայն մեկնաբանելու և բացատրելու արդյունքում այդ թերությունները վերացան:

Եզրակացություն

Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:

Ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Ինքնուրույն աշխատանքի ընթացքում զարգանում են գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու
հմտությունները:

Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և

ինքնակատարելագործման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ. Թորոսյան, Ա. Բալայան, Կ. Ջիբուխչյան, Մայրենիի դասերի պլանավորումը, «Զանգակ» հրատարակչություն, Երևան,2016թ.

2. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան, Ալեքսանյան Լ, Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում Ձեռնարկ, Երևան: «Անտարես»: 2006

3. Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան,2020

4. Յու.Ամիրջանյան,Ա.Սահակյան Մանկավարժություն/ուս.ձեռնարկ/2005

5. Նախաշավիղ№7. 2011

6. Նախաշավիղ №2.2017

7. http://boon.am/autonomy/

Հավելված

Դասապլան 1

Ուսուցիչ՝Մոմչյան Գայանե

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	**11.04.2022**	Կիսամյակ	**2-ր դ**	Դասարան	**2**
Թեմա՝	Գեղարդ						
Օգտագործվող նյութեր	2-րդ դասարանի մայրենիի դասագիրք, կավիճ, գրատախտակ, գիրք, տետր, ծրար, արկղիկ, Գեղարդի մանրակերտը,նետ/գեղարդ/, քարտեր						
Դասի նպատակը՝	-Իմանան պարզ ընդարձակ նախադասության կառուցվածքը Ամրապնդել հասկանալով կարդալու կարողությունները Վերարտադրել նկարի բովանդակությունը և հակադրել տեքստի բովանդակության հետ						

Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան ● Սահուն կարդալ, վերարտադրել կարդացածը ● Լսել, հասկանալ և հարցեր առաջադրել հնչած խոսքի վերաբերյալ ● Մասնակցել, ակտիվություն դրսևորել խմբի աշխատանքն ամբողջականացնելու և ներկայացնելու հարցում ● Աշխատել լեզվատրամաբանական առաջադրանքների շուրջ

Գործողություններ Ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ

Սկիզբ /մուտք, ներկա-բացակա 5ր/	Բացում են դասագրքերը, պատրաստվում նոր դասին: Ներկայացնում են տնային աշխատանքները: Գուշակում են հանելուկը: Կարդում են տեքստը հատվածաբար: Մեկնաբանում, կատարում բառային աշխատանք:	Ողջունում է դասարանին, ն/բ: Ստուգում տնային աշխատանքները բացատրում անհասկանալի մասերը: Ներկայացնում է նոր դասանյութը:	1.Որտե՞ղ է գտնվում Գեղարդի վանքը:	«Կենտրոնացնող հարցեր» «Ուղղորդված ընթերցանություն»
30ր ընթացք				

	Խմբերը ներկայացնում են կատարած աշխատանքը: Յուրաքանչյուր խումբ պատասխանում է քառաբաժանի հարցերին:	Բացատրում է հանձնարարությունը, շրջում դասարանում, հետևում խմբերի ինքնակոմնեերին օգնում դժվարացող աշակերտներին:	2.Հայ լեխանն ինչպե՞ս է իմանում, թե որտեղ կառուցի եկեղեցին:	Խմբային աշխատանք
	'	Բաժանում է քարտերը, որոնց վրա գետեղված են լեգվատրամաբանական առաջադրանքները:	3.Հայ լեխանը որտե՞ղ է գտնում մուրճը:	«Քառաբաժան»

Ամփոփում,գնահատում 5ր		Բացատրում է հանձնարարությունը: Լսում է խմբերի ներկայացրած աշխատանքը: Գնահատում է խմբերի կատարած աշխատանքը:	4.Ի՞նչ զգացողություն է ունենում իշխանը մուրճը գտնելով: 5.Իշխանն ո՞ւմ է հրավիրում եկեղեցին կառուցելու: 6.Ինչպե՞ս են ելք գտնում իրավիճակից: 7.Ի՞նչ են զգում մարդիկ Գեղարդի վանք այցելելիս:	

Տնային հանձնարարություն **5**ր	Նշում են տնային հանձնարարությունը	Բացատրում է տնային հանձնարարությունը:		

Տնային աշխատանք	Հանձնարարել գրել 5 նախադասություն՝ օգտագործելով առաջ. 3-րդի բառերը, սովորել կարդալ

Դասապլան 2

Ուսուցիչ՝Մոմչյան Գայանե

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	06.05. 2022	Կիսամյակ	2-րդ	Դասարան	2
Թեմա՝	Հայոց բանակը						
Օգտագործվող նյութեր	2-րդ դասարանի մայրենիի դասագիրք, կավիճ, գրատախտակ, գիրք, տետր, ծրար, արկղիկ, Ա1 չափսի պաստառներ, հանրագիտարաններ.նկարներ, բառարան, հայրենիքի, նրա հերոսների մասին երգերի բառեր,հերկեր,մատիտներ,սոսինձ, ֆարտեր:						
Դասի նպատակը՝	• Ընտրված թեմայով աշխատելու կարողությունների զարգացում • Կրտսեր դպրոցականի ստեղծագործական-իմացական ներուժի խթանում • տեղեկատվական տվյալներով ինքնուրույն աշխատելու կարողությունների զարգացում						

Ուսուցման փաստեր,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան • ինքնուրույն սովորել և սովորեցնել • սովորել ինքնուրույն գործունեության պլանավորման գործողությունների ֆայլաշարը մշակելու և վերլուծելու, ցանկացած իրավիճակում կողմնորոշվելու հմտություն

		Կզարգանա սովորողների ճանաչողական ակտիվությունը և ստեղծագործական ինքնուրույնությունը:		
Գործողություններ Ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր–սկիզբ /տնայինինստուգում/ **10**ր–/դասի հարցում/	Բացում են դասագրքերը, պատրաստվում նոր դասին: Ներկայացնում տնային աշխատանքները: Պատասխանում են հարցերին:	Ողջունում է դասարանին, ն/բ: Կատարում հաշվառում: Նախապատրաստական զրույցի միջոցով բացատրում է դասը: Հիշեցնում դասի թեման: Ստուգում տնային հանձնարարությունները:		Նախապատրաստական զրույց

20ր /խմբայինաշխատանք/	Ուսումնասիրում են դասի իրենց հատվածը, ինչպես նաև տրամադրված այլ նյութեր: Տեղեկատվությունը մշակում են, աշխատանք կատարում պաստառի ձևավորման ուղղությամբ:	Բացատրում է հանձնարարությունը, ձևավորում 6 խումբ:	Ի՞նչ նշանավոր հայորդիների ճանաչեցիք:	Խմբային աշխատանք
	Խմբերը հերթով ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը:	Լսում է խմբերի ներկայացրած տարբերակները, օգնում հավաքել «Հաղթամատյանը»:	Ո՞ր արաքներն են նրանց նշանավոր դարձրել:	Շրջանաձև շարադրանքի մեթոդ
	Նշում են տնային առաջադրանքների համարները:	Որպես կազմ ամրացնում է իր կողմից նախապես պատրաստված պաստառը:		

7րոպե ամփոփում **3**ր Տնային հանձնարարություն	Խմբերը շրջանաձև շարադրանքի մեթոդով գրում են իրենց շնորհակալական խոսքերը հայրենիքի նվիրյալներին: Նշում են տնային հանձնարարությունը լսում ուսուցչին:	Գնահատում է խմբային աշխատանքի ընթացքն ու արդյունքները: Հանձնարարում է տնային աշխատանք, տալիս մեկնաբանություն:	Ո՞ր իրադարձությունները ձեր մեջ տպավորվեցին: Ի՞նչ նոր անուններ, բառեր սովորեցիք թեմայի ուսումնասիրության ժամանակ:	

Տնային աշխատանք		Կրկնել «Հայաստանը մեր հայրենիքն է» թեմատիկ շարքը: Գրել շարադրություն՝ «Սիրում եմ քեզ, իմ հայրենիք» վերնագրով:		